ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի ~~28~~19-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածով լրացվող 9-րդ հոդվածի 1-ին ~~մասի~~ մասը

1. ~~1-ին կետը~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ~~–~~ 9.1, 9.2, ~~և~~ 9.3, 9.4 և 9.5 ~~պարբերություններով~~ կետերով.

| | | |
|---|---|---|
| 9.1 | ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի $27^2$-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ՝ սույն մասի ~~«դ» և «ե»~~ 9.2, ~~և~~ 9.3, 9.4 և 9.5-րդ կետերով նախատեսված դեպքերի՝ | գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից |
| 9.2 | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի $27^2$-րդ գլխով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 9.3 | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով | բազային տուրքի 60-ապատիկի չափով »: |
| 9.4 | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 9.5 | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով | բազային տուրքի 100-ապատիկի չափով |

2. ~~1-ին կետի~~ 10-րդ ~~պարբերությունը~~ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ», «ժգ», ~~և~~ «ժդ», «ժե» և «ժզ» ենթակետերով.

| | |
|---|---|
| ժբ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի $27^{2}$-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ՝ սույն կետի ~~մասի~~ «ժգ», «ժդ», «ժե» և «ժզ» ենթակետերով նախատեսված դեպքերի՝~~«ե» և «զ» 9.2 և 9.3-րդ կետերով նախատեսված դեպքերի՝~~ | գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից |
| ժգ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27²-րդ գլխով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 400-ապատիկի չափով |
| ժդ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 90-ապատիկի չափով |
| ժե) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով | բազային տուրքի 75-ապատիկի չափով |
| ժզ) Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով | բազային տուրքի 150-ապատիկի չափով |

»:

3․ ~~1-ին կետի~~ 11-րդ ~~պարբերությունը~~ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժա», «ժբ», ~~և~~ «ժգ», «ժդ» և «ժե» ենթակետերով.

| | |
|---|---|
| ժա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի $27^{2}$-րդ գլխով նախատեսված վեճերով, բացառությամբ՝ սույն կետի «ժբ», «ժգ», «ժդ» և «ժե» ենթակետերով նախատեսված դեպքերի՝~~մասի 9.2 և 9.3-րդ կետերով«ե» և «զ» կետերով նախատեսված դեպքերի՝~~ | գնման գնի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից |
| ժբ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27²-րդ գլխով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 400-ապատիկի չափով |
| ժգ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ | բազային տուրքի 90-ապատիկի չափով |

»:

| | | |
|---|---|---|
| ժդ) | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով | բազային տուրքի 75-ապատիկի չափով |
| ժե) | Գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով | բազային տուրքի 150-ապատիկի չափով |

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ~~չորրորդ ամսվա մեկից~~օրվանից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

~~2020~~ 2021 թ. ___________ __

Երևան

ՀՕ-__-Ն